Հավելված
Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի
հուլիսի 30-ի թիվ 125-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 79-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի մարտի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020 թվականի հունիսի 8-ից մինչև 2020 թվականի հուլիսի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի հինգերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դ. Չիբուխչյանը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական բյուջեից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը 2020 թվականին տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 145,897,234.5 հազ. դրամ: 2020 թվականի առաջին եռամսյակի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 26,252,039.2 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 10,264,934.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 8,827,899.9 հազ. դրամ:

Հաշվեքննության է ենթարկվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության կատարման վերաբերյալ 2020 թվականի մարտի 31-ին ավարտված եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն) և Նախարարության կողմից ծրագրերի կատարման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի հիման վրա մշակված մոթոդական ցուցումներով ՀՀ տարածքային կառավարման և նթակառուցվածքների նախարարության 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության նվազագույն ծածկույթ է նախատեսվել 6,199,266.0 հազ. դրամ, որը ապահովելու համար ընտրվել են հետևյալ տասը հոդվածները՝

Աղյուսակ 1

	Միջոցառում	Հոդված	Հոդվածի անվանում	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
1	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ	425100	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	9,873,959.3	910,625.0	899,833.9	899,833.9

	Միջոցառում	Հոդված	Հոդվածի անվանում	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
2	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի ծրագրի կառուցում և հիմնանորոգում	511300	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	14,401,219.0	3,650,000.0	379,921.5	296,572.3
3	Տարրական ընդհանուր հանրակրթություն	451100	- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	7,263,186.3	1,452,588.3	1,420,250.3	1,420,2503
4	Հիմնական ընդհանուր հանրակրթություն	451100	- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	10,260,725.6	2,052,072.5	1,993,392.0	1,993,932.9
5	Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ	463200	- Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին	2,124,862.3	340,900.7	297,326.7	297,326.7
6	Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում	451100	- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	2,801,071.0	552,702.0	552,690.0	552,690.0

	Միջոցառում	Հոդված	Հոդվածի անվանում	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
7	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր	511300	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	6,953,481.6	2,781,389.7	674,005.5	673,486.5
8	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա, Բ)	511200	- Շենքերի և շինությունների շինարարություն	2,263,116.6	905,246.6	336,743.2	336,743.2
9	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն	511200	- Շենքերի և շինությունների շինարարություն	9,233,794.8	1,927,280.7	332,140.8	510,885.8
10	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ	511200	- Շենքերի և շինությունների շինարարություն	10,682,757.2	1,265,993.9	435,094.8	435,094.6
				75,858,173.7	15,838,799.4	7,321,398.7	7,416,816.2

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունից ընտրված հաշիվների հաշվեքննությամբ, պարզվել է.

1. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ իրականացնելու համար 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 9,873,959.3 հազ. դրամ, որից՝ առաջին եռամսյակում՝ 910,625.0 հազ. դրամ: Համաձայն ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության՝ առաջին եռամսյակի դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 899,833.9 հազ. դրամ:

Ծրագիրը ներառում է միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանման, պարբերական պահպանման (միջին նորոգման), գծանշման, մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման, արհեստական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքները:

Ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներն իրականացնվել է 40 տարածաշրջանների (լոտերի) ավտոճանապարհների պահպանման համար 2015-2019թթ. կնքված և մինչև 2020-2023 թվականները գործող պայանագրերի շրջանակներում կնքված համաձայնագրերի հիման վրա:

Մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման աշատանքներն իրականացվել է 10 մարզերում թվով 4 ընկերությունների, գծանշման աշատանքները 10 մարզերում թվով 3 ընկերությունների, իսկ թվով 3 թունելների և 5 կամուրջների պահպանման ու շահագործման աշխատանքներն 5 ընկերությունների հետ 2015 թվականի պայմանագրերի հիման վրա կնքված համաձայնագրերի շրջանակներում:

2020 թվականի «ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և անվտանգ երթևեկության ծառայություններ» ծրագրով համաձայնագրերը կապալառու կազմակերպությունների հետ կնքվել են

2020 թվականի փետրվարի 20-ին և 24-ին:

ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի համաձայն՝ ծրագրով 2020 թվականի առաջին եռամսյակի ճշտված պլանով նախատեսված 3477.6 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհների ձմեռային պահպանման աշխատանքների փոխարեն փաստացի իրականացրել է 3336.94 կմ պահպանման աշխատանքներ, կամ պակաս 140.7 կմ-ով, նախատեսվել և իրականացվել են 3 թունելների և 5 կամուրջների պահպանման ու շահագործման աշխատանքներ, իսկ նախատեսված 708կմ արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման աշխատանքների փոխարեն փաստացի իրականացվել է 715.4 կիլոմետր աշխատանքներ:

Կնքված համաձայնագրերի համաձայն՝ 2020 թվականի 1-ին եռամսյակում նախատեսվել է իրականացնել 1,029,514.5 հազ. դրամի ձմեռային պահպանման աշխատանքներ, փաստացի իրականացվել է 1,028,225.0 հազ. դրամի աշխատանք:

ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման ծրագրի շրջանակում կնքված համաձայնագրերով նախատեսվել է 2020 թվականի 1-ին եռամսյակում իրականացնել 220,878.4 հազ. դրամի աշխատանքներ, փաստացի կատարվել է 201,379.7 հազ. դրամի աշխատանքներ, իսկ արհեստական կառույցների պահպանման և շահագործման ծրագրով նախատեսվել և իրականացվել է 60,513.0 հազ. դրամի աշխատանքներ:

2020 թվականի 1-ին եռամսյակի գնման ժամանակացույցով Մ1, Երևան-Աշտարակ-Գյումրի-Վրաստանի սահման և Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման ճանապարհահատվածների արտաքին լուսավորման համակարգի պահպանության աշխատանքների համար նախատեսվել և իրականացվել է 11,733,8 հազ. դրամի աշխատանք:

Այսպիսով, 2020 թվականի 1-ին եռամսյակում «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ» ծրագրի փաստացի կատարողականը կազմել է 1,322.639.7 հազ. դրամ, իսկ նախարարության կողմից ներկայացված բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի հաշվետվությամբ ներկայացվել է 899,833.7 հազ. դրամ:

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանման, աշխատանքները պետք է իրականացվեին ՀՀ

կառավարության 04.10.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգին (այսուհետ Կարգ) համապատասխան:

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով և 6-րդ հոդվածի 4-րդ մասով, ՀՀ կառավարությունը 13.02.2014թ. թիվ 265-Ն որոշմամբ ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների կառավարման մասով և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, բացառությամբ Երևան քաղաքի տարածքում գտնվող՝ այդ ճանապարհների մաս հանդիսացող հատվածների, տնօրինման մասով պետական ճանապարհային մարմին է սահմանել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը: Նույն որոշմամբ հաստատվել է նաև ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը՝ դասակարգված ըստ նշանակության:

Հաստատված անվանացանկի ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշ ճանապարհների ըստ նշանակության դասակարգումը չի համապատասխանում «Ավտոմոբիլաին ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին: Մասնավորապես.

Որպես **միջպետական նշանակության** ավտոճանապարհներ դասակարգված 585.3կմ ավտոճանապարհներից՝ 387 կմ ավտոճանապարհները հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ (կապում են ՀՀ ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին, սակայն չեն ապահովում միջազգային տրանսպորտային հաղորդակցություն, հանրապետության քաղաքները մայրաքաղաքին, միմյանց և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին): Նշված ավտոճանապարհներից 2020 թվականի 1-ին եռամսյակում ձմեռային պահպանության աշխատանքներում ներառված 319.1 կմ ավտոճանապարհների, որպես միջպետական նշանակության ավտոճանապարհների պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են, որպես հանրապետական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար կապալառու ընկերությունների առաջարկած պայմանագրային գներից:

167.8 կմ ավտոճանապարհներ հանդիսանում են *տեղական նշանակության* ճանապարհներ (կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության

ճանապարհներին): Համաձայն ՀՀ կառավարության 13.02.2014թ. թիվ 265-Ն որոշման 3-րդ մասի 2-րդ կետի ա) ենթակետի մարզային նշանակության ավտոճանապարհների պետական ճանապարհային մարմինը տնօրինման մասով ոչ թե ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է այլ ՀՀ մարզպետներն են: Նշված ատոճանապարհները 2020 թվականին ներառվել են պահպանման համաձայնագրերում, որպես միջպետական նշանակության ճանապարհներ, որոնց պահպանության համար 1-ին եռամսյակում հաշվարկվել է 49,389,0 հազ. դրամի կատարողական:

34.5 կմ երկարությամբ ճանապարհներ, որոնց պահպանման համար 2020 թվականի 1-ին կիսամյակում ընդունվել են *4,987.8 հազ դրամի* կատարողականներ, հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ:

Որպես **հանրապետական նշանակությա**ն ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 563.1 կմ ճանապարհները հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ, որոնց պահպանության համար 2020թվականի 1-ին եռամսյակի կատարողականներով հաշվարկվել է 138,114.1 հազ. դրամ:

58.7 կմ-ն դաշտամիջյան ճանապարհներ, որոնց պահպանության համար 2020 թվականի 1-ին եռամսյակի կատարողականներով հաշվարկվել է 8,018.5 հազ. դրամ:

7.6 կմ-ը քաղաքային փողոց է, որի պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է 2,106.1 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 13.02.2014թ. թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ մասով սահմանվել է, որ Գյումրի, Վանաձոր, Կապան, Իջևան, Վաղարշապատ և Արմավիր քաղաքների տարածքներում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների *միայն երթևեկելի մասի ծածկի* ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքներն են իրականացվում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից:

Կապան, **Իջևան և Արմավիր** քաղաքների տարածքներում գտնվող 21.5 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհները ընդգրկվել են 2020 թվականի ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանման համաձայնագրերում: Կարգի համաձայն՝ ճանապարհների ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքները, բացի երթևեկելի մասից, ներառում են նաև հողային պաստառը և օտարման շերտը, արհեստական կառուցվածքները և կահավորանքը: Համաձայն նույն Կարգի աղյուսակ 4-ի, ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների ապահովման ընդհանուր արժեքում երթևեկելի մասի ծածկը կազմում է 70%-ը,

հետևաբար նշված ճանապարհների ձմեռային պահպանման աշխատանքների համար պետք է վճարվեր պայմանագրային գնի 70%-ը, այնինչ վճարվել է ամբողջությամբ, կամ ավել է վճարվել 2,201.6 հազ. դրամ:

Հաշվեքննվող օբյեկտի արձագանքը

Միջպետական և հանրապետական ճանապարհների դասակարգումը, ՀՀ կառավարության որոշմամբ, իրականացվել է "Ավտոմոբիլային ճանապարհների մասին" ՀՀ օրենքի հոդվածների համապատասխան: Այդ ճանապարհների դասակարգումը գործում է 50 և ավելի տարի և մինչ այժմ այդ հարցը չի բարձրացվել, ավելին՝ եթե ոչ համոզիչ փաստարկներից ելնելով միջպետական և հանրապետական ճանապարհները դասակարգվեին որպես տեղական, ապա այսքան տարի մարզպետարաններին հատկացված պահպանման գումարներով այդ ճանապարհները հիմնովին շարքից դուրս կգային և հանրապետության ճանապարհային ցանցը անմխիթար վիճակում կհայտնվեր:

Ճանապարհների միայն երթևեկելի մասի քաղաքային հատվածների պահպանման մասով՝

Ճանապարհի պահպանման մրցույթին ներկայացվում է 1.0կմ-ի միջինացված գինը: Յուրաքանչյուր կմ-ում տարբեր են արհեստական կառույցների, նշանների, ծածկի լայնությունների, կողնակի կամ մայթերի լայնությունների քանակն ու մեծությունները: Բացի այդ քաղաքային պայմաններում շատ գործոններ դժվարեցնում և ավելի ծախսատար են դարձնում պահպանման աշխատանքները:

Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված արձագանքը չի ընդունվել:

2. **Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագիր**

«Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրի» համար 2020 թվականին ՀՀ պետական բյուջեից նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 14,401,219.0 հազ. դրամ, որից առաջին եռամսյակում 3,650,000.0 հազ. դրամ: Համաձայն ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության առաջին եռամսյակի դրամարկղային ծախսը կազմել է 379,921.5 հազ. դրամ, փաստացի ծախսը 296,572.3հազ. դրամ:

«Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում կնքվել է 3 պայմանագիր՝ «Ա.Ա.Բ.ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի հետ՝ գումարով 1,900,000.0 հազ. դրամ, «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի հետ՝ գումարով 2,760,000.0 հազ. դրամ և «Հորիզոն-

95» ՍՊԸ-ի հետ՝ գումարով 98,177,845.0 հազ. դրամ: Պայմանագրերը կնքվել են 2017 թվականի նոյեմբերի 30-ին մինչև 2021 թվականի մայիսի 19-ը ժամկետով:

2020թվականի առաջին եռամսյակի ընթացքում «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով «Ա.Ա.Բ.ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ին վճարվել է 124,293.7 հազ. դրամ, «Սուարդի» ԲԸ-ին՝ 157,449.9հազ. դրամ, իսկ «Հորիզոն-95» ՍՊԸ-ին 98,177.845 հազ. դրամ: Ընդհանուր վճարումը կազմել է 379,921.5 հազ. ՀՀ դրամ:

«ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հավելվածի համաձայն «Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով» հունվար-մարտ ամիսներին նախատեսվել է 3 կապալի պայմանագրերի հիման վրա կատարել **3**,650,000.0 հազ. դրամի աշխատանքներ: Փաստացի աշխատանքների դիմաց փոխանցվել է 379,921.52 հազ. դրամ, շեղումը կազմել է 3,270,078.48 հազ. դրամ: Այլ կատարողական ցուցանիշեր այս ծրագրով նախատեսված չեն:

Հաշվեքննվող օբյեկտի արձագանքը

ԱՋԲ-ի աջակցությամբ իրականացվող Մ-6 միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրի շրջանակներում 2017թ. նոյեմբերի 30-ի 3 լոտերի համար կնքվել են 3 շինարարական աշխատանքներ իրականացնող Պայմանագրեր: Աշխատանքների մեկնարկը տրվել է 2018թ. մայիսի 29-ին: Պայմանագրի համաձայն աշխատանքների ավարտը կազմում է 900 օր և ևս 365 օր նախատեսված է հետերաշխիքային ժամկետի համար: Ուստի պայմանագրի ավարտ է համարվում 2021թվականի նոյեմբերի 14-ը:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝ Ըստ էության, որևէ առարկություն չի ներկայացվել:

3. Տարրական ընդհանուր հանրակրթություն

Տարրական ընդհանուր հանրակրթության ծառայություններ մատուցելու համար ՀՀ պետական բյուջեից 2020 թվականին նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 7,263,186.2 հազ. դրամ /7,259,109.4 հազ. դրամ. սուբսիդիա, 4,076.8 հազ. դրամ կենցաղային և հանրային սննդի նյութեր/ ոչ ֆինանսական պետական կազմակերպությունների համար: 2020 թվականի առաջին եռամսյակի ճշտված պլանով նախատեսել է հատկացնել 1,452,588.3 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 1,420,250.3 հազ. դրամ:

«Տարրական ընդհանուր հանրակրթություն» ծրագրի շրջանակում պետք է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող **153 հանրակրթական**

ուսումնական հաստատություններում մատուցվեր պարտադիր կրթության առաջին մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովման ծառայություններ:

«ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի» համաձայն՝ Տարրական ընդհանուր հանրակրթության դասարանների սովորողների միջին տարեկան թիվը 2020թվականի տարեկան ճշտված պլանով սահմանվել է 47206 աշակերտ, միջոցառման վրա կատարվող ծախսը 7,263,186.3 հազ. դրամ: 2020 թվականի առաջին եռամսյակում սովորողների ճշտված թիվը սահմանվել է 47206 աշակերտ, իսկ կատարվող ծախսը՝ 1,452,588.3 հազ. դրամ, փաստացի աշակերտների թվաքանակը կազմել է 46,883, դրամարկղային ծախսը՝ 1,420,250.3 հազ. դրամ, տարբերությունը կազմել է 323 աշակերտ՝ գումարով 32,338.0 հազ. դրամ:

Տարրական ընդհանուր հանրակրթության գծով մատուցված ծառայությունների դիմաց Երևանի քաղաքապետարան ներկայացված ՀՀ կառավարության 15.06.2018թ.-ի թիվ 706-Ն որոշմամբ սահմանված «Պահանջվող վճարումների հիմնավորվածության մասին» Ձև 5 հավաստագրի համաձայն, վճարման ենթակա գումարը՝ 2020 թվականի հունվար, փետրվար և մարտ ամիսների համար կազմել է 2,105,841.6 հազ. հազ. դրամ /708,884.2 +710,784.7+686,172.7/, իսկ Երևանի թիվ 201 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի համար կենցաղային և հանրային սննդի նյութեր ձեռքբերելու դիմաց գումարը՝ 1,418.5 հազ. դրամ/ 290.7 + 290.7 + 837.1/:

Հաշվեքննության արդյունքում **Տարրական ընդհանուր հանրակրթության գծով մատուցված ծառայությունների դիմաց** փաստացի ծախսը կազմել է 2,107,260.1 հազ. դրամ /2,105,841.6+1,418.5/, սակայն նախարարության կողմից ներկայացրած «Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի» հաշվետվությունում որպես փաստացի կատարված ծախս նշել է 1,420,250.3 հազ. դրամ՝ 2,107,260.1 հազ. դրամի փոխարեն:

«ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Տարրական ընդհանուր հանրակրթություն» ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված իրավունքները փոխանցվել են Երևանի քաղաքապետարանին:

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մի շարք ծրագրերով պետության կողմից Երևանի քաղաքապետին

լիազորությունների պատվիրակման և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավունքների փոխանցման համար 30.01.2020թ. կնքված թիվ 1 պայմանագրում, որի հիման վրա Երևանի քաղաքապետարանին է փոխացվել նախատեսված գումարները, չի ամրագրվել **ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշման** 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանը, ըստ որի Երևանի քաղաքապետարանը պատվիրակված ծրագրի միջոցառումների գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները սահմանված կարգով պետք է ներկայացներ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

4. **Հիմնական ընդհանուր հանրակրթություն**

«Հիմնական ընդհանուր հանրակրթութուն» ծրագրի համար ՀՀ պետական բյուջեից 2020թվականին նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 10,260,725.6 հազ. դրամ /10,254,680.7 հազ. դրամ սուբսիդիա, 6,044.9 հազ. դրամ կենցաղային և հանրային սննդի նյութեր/, ոչ ֆինանսական պետական կազմակերպությունների համար, որից առաջին եռամսյակում 2,052,072.5 հազ. դրամ: Համաձայն ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության առաջին եռամսյակի ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 1,993,932.0 հազ. դրամ /1,992,928.6 հազ. դրամ. սուբսիդիա, 1,004.3 հազ. դրամ կենցաղային և հանրային սննդի նյութեր/:

ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի համաձայն «Հիմնական ընդհանուր հանրակրթության դասարանների սովորողների միջին տարեկան թիվը 2020 թվականի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 53274 աշակերտ, միջոցառման վրա կատարվող ծախսը 10,260,725.6 հազ. դրամ: 2020 թվականի առաջին եռամսյակում սովորողների թիվը փաստացի կազմել է 52,519 աշակերտ, կատարված 1,993,932.9 հազ. դրամ ծախսով, ճշտված պլանով սահմանված 53,274 աշակերտի և 2,052,072.5 հազ. դրամ ծախսի փոխարեն, տարբերությունը կազմել է 755 աշակերտ՝ 58,139.6 հազ. դրամ ծախսով:

Սովորողների միջին գնահատականը գիտելիքների ստուգման արդյունքում տարեկան ճշտված պլանով և հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել է 13 բալ, փաստացի սովորողների միջին գնահատականը կազմել է 8 բալ:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ում և Երևան քաղաքում գործում է գիտելիքների գնահատման 10 բալային համակարգ:

Հիմնական ընդհանուր հանրակրթության գծով մատուցված ծառայությունների դիմաց Երևանի քաղաքապետարան ներկայացված ՀՀ կառավարության 15.06.2018թ.-ի թիվ 706-Ն որոշմամբ սահմանված «Պահանջվող վճարումների հիմնավորվածության մասին» Ձև 5 հավաստագրի համաձայն, վճարման ենթակա գումարը, 2020 թվականի հունվար, փետրվար և մարտ ամիսների համար կազմել է 2,954,099.4 հազ. դրամ /993,625.3 + 995,753.3 + 964,720.8/, իսկ Երևանի թիվ 201 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի համար կենցաղային և հանրային սննդի նյութեր ձեռքբերելու դիմաց գումարը՝ 2,450.1 հազ. դրամ/ 502.1+502.1+1,445.9/:

Հաշվեքննության արդյունքում **«Հիմնական ընդհանուր հանրակրթության» գծով մատուցված ծառայությունների դիմաց** փաստացի ծախսը կազմել է 2,956,549.5 հազ. դրամ /2,954,099.4+2,450.1/, սակայն նախարարության կողմից ներկայացրած «Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի» հաշվետվությունում, որպես փաստացի կատարված ծախս նշել է 1,993,932.0 հազ. դրամ՝ 2,956,549.5 հազ. դրամի փոխարեն:

2020 թվականի հունվար փետրվար ամիսների համար դպրոցներին վճարվող սուբսիդիայի գումարը, ըստ ներկայացված «Պահանջվող վճարումների հիմնավորվածության մասին» հավաստագրերի, կազմել է 1,989,378.6 հազ. դրամ, սակայն նախարարության կողմից վճարվել է 1,992,928.6 հազ. դրամ, կամ վճարվել է 3,550.0 հազ. դրամով ավել:

«ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 26.12.2019թ.-ի թիվ 1919-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն «Հիմնական ընդհանուր հանրակրթություն» ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված իրավունքները փոխանցվել են Երևանի քաղաքապետարանին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև 30.01.2020թ.-ին կնքված թիվ 1 պայմանագրում չի ամրագրվել **ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման** 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանը, ըստ որի Երևանի քաղաքապետարանը պատվիրակված ծրագրի միջոցառումների գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները սահմանված կարգով

պետք է ներկայացներ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

5. Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ

«Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ» մատուցելու համար ՀՀ պետական բյուջեից 2020 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,124,862.3 հազ. դրամ սուբվենցիա, որից առաջին եռամսյակում 340,900.7 հազ. դրամ: Համաձայն ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության՝ առաջին եռամսյակի ֆինանսավորումը, դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը կազմել է 297,326.7 հազ. դրամ:

«ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն «Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված իրավունքները փոխանցվել են Երևանի քաղաքապետարանին:

Ըստ **ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի** “Երևան քաղաքի արտաքին լուսավորությամբ ապահովված փողոցների երկարությունը փաստացի **կազմել է 1,678.3 կմ, իսկ օբյեկտների թիվը 2,628 հատ, նախատեսված 1,660կմ-ի փողոցի և 2,567 օբյեկտի փոխարեն: Տարեկան ճշտված պլանի համաձայն նախատեսվել էր ապահովել 1,675 կմ երկարության փողոցների և 2570 օբյեկների արտաքին լուսավորություն, որոնց վրա կատարվող ծախսը եռամսյակի ճշտված պլանի համաձայն նախատեսվել է 340,900.7 հազ. դրամ,** փաստացի կազմել է 297,326.7 հազ. դրամ:

2020 թվականի առաջին եռամսյակի արդյունքային ցուցանիշների համաձայն փաստացի իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում պլանավորված աշխատանքներից ավելի աշխատանքներ՝ ապահովվել է արտաքին լուսավորությամբ 1678.3 կմ փողոցներ, նախատեսված 1660կմ-ի փոխարեն և 2628հատ օբյեկտների արտաքին լուսավորություն, նախատեսված 2567հատի փոխարեն:

Անհրաժեշտ է նշել, որ 2020 թվականի առաջին եռամսյակի համար պլանավորված բյուջեի ծախսը փոփոխման արդյունքում նվազել և 445,990.0հազ.

դրամից դարձել է 340,900.7 հազ. դրամ, սակայն քանակական ցուցանիշները չի փոփոխվել:

2020 թվականի առաջին եռամսյակի համար պլանավորված բյուջեի ծախսի նվազեցումը նախարարության կողմից հաշվի չի առնվել և համապատասխան փոփոխություն չի կատարվել 2020 թվականի հունվարի 30-ին նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված «ՀՀ 2020թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մի շարք ծրագրերով «Երևանի քաղաքապետարանին նպատակային հատկացումների /սուբվենցիաների/ մասով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավունքների փոխանցման» թիվ 1 պայմանագրում, որի հիման վրա Երևանի քաղաքապետարանին է փոխացվել ծրագրով նախատեսված գումարները:

Կնքված պայմանագրի 2.3.4 կետի համաձայն՝ քաղաքապետարանը պարտավոր էր հատկացվող սուբվենցիայի շրջանակներում քաղաքապետարանի և ծրագիրն իրականացնող համապատասխան սուբյեկտների հետ պայմանագրեր կնքելիս այդ պայմանագրերի պատճենները 15-օրյա ժամկետում, իսկ 2.3.5 կետի համաձայն նպատակային ծրագրերի /սուբվենցիաների/ գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները և կատարված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության պատճենները ներկայացնել նախարարություն, սակայն քաղաքապետարանի կողմից նախարարություն ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել:

«ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի թիվ 1919-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ մասի համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված սուբվենցիայի տրամադրման պայմանագրով նախատեսված, սուբվենցիաների գումարների օգտագործման նկատմամբ՝ Նախարարության կողմից պայմանագրի 3.1 կետով սահմանված՝ պայմանագրի 2.3.4 և 2.3.5 կետերում նշված փաստաթղթերը ստանալու միջոցով, նախնական փաստաթղթային հսկողություն չի իրականացվել:

6. Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում

«Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում» ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից 2020 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,801,071.0 հազ. դրամ սուբսիդիա: 2020 թվականի առաջին եռամսյակի համար ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 552,702.0հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը կազմել է 552,690.0 հազ. դրամ:

«ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն «Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների» ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախաարությանը վերապահված իրավունքները փոխանցվել են Երևանի քաղաքապետարանին:

Ծրագրի շրջանակում կնքվել է 1 գնում չհանդիսացող պայմանագիր «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հետ՝ գումարով 2,801,071.0 հազ. դրամ:

«ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվության համաձայն ծրագրով հունվար-մարտ ամիսներին նախատեսվել է փոխադրել 4,512.0 հազ. ուղևոր՝ գումարով 552,702.0 հազ. դրամ, որից արտոնություններից օգտվող 372,0 հազ. ուղևոր, փաստացի մետրոպոլիտենով փոխադրվել է 3,844.5 հազ. ուղևոր, այդ թվում՝ արտոնություններից օգտվող 219.3 հազ. ուղևոր, որի դիմաց վճարվել է 552,690.0 հազ.դրամ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև 30.01.2020թ.-ին կնքված թիվ 1 պայմանագրում, չի ամրագրվել **ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման** 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանը, ըստ որի Երևանի քաղաքապետարանը պատվիրակված ծրագրի միջոցառումների գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները սահմանված կարգով պետք է ներկայացներ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

7. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր

«Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագրի» համար ՀՀ պետական բյուջեից 2020 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 6,953,481.6 հազ. դրամ, որից առաջին եռամսյակում 2,781,389.7 հազ. դրամ: Համաձայն ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության դրամարկղային ծախսը կազմել է 674,005.5 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 673,486.5 հազ. դրամ:

«ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվության համաձայն հունվար-մարտ ամիսներին նախատեսվել և իրականացվել է.

- Գյումրի քաղաքի 8 փողոցների (միջինը 9.5մ լայնությամբ և 16.75 կմ երկարությամբ) հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 3 փողոցների հիմնանորոգում, պակաս է կատարվել 5-ով:
- Գյումրի քաղաքի հարակից մայթերով (միջինում 4մ լայնությամբ) 8 հատ փողոցների հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 3 հարակից մայթերով փողոցների հիմնանորոգում, պակաս է կատարվել 5-ով:
- Գյումրի քաղաքի փողոցների անձրևաջրերի հեռացման համակարգի 4467 գծ/գմ հիմնանորոգում, փաստացի աշխատանք չի իրականացվել:
- Գյումրի քաղաքի լուսավորության համակարգի 357 լուսակետ հենասյունով հիմնանորոգում, փաստացի աշխատանք չի կատարվել:
- Քաղաքի 147 փողոցների լուսավորության համակարգի արդիականացում ավտոմատ կառավարման համակարգող մեկ լուսակետ, փաստացի աշխատանքներ չի կատարվել:

Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագրի համար պետական բյուջեով նախատեսված գումարներից կատարված վճրումների, ինչպես նաև ծրագրի ծախսերը հիմնավորող ոչ մի հիմնավորում նախարարության կողմից չի ներկայացվել:

Հաշվեքննվող օբյեկտի արձագանքը

Նախարարության կողմից ներկայացվել է Գյումրու համայնքապետարանի բացատրությունները,

Ծրագրի վարկային և դրամաշնորհային բաղադրիչների մասով 2020 թվականի պետական բյուջեով երեք ամիսների ընթացքում իրականացման համար նախատեսված միջոցառումների շրջանակներում ընդգրկված թվով 12 փողոցների և դրանց ենթակառուցվածքների շինարարական աշխատանքները ֆիզիկապես ավարտված են եղել ու ընթացել են թերությունների շտկման աշխատանքներ, ինչ

վերաբերվում է իրականացված աշխատանքների դիմաց վճարումներին, ապա ցանկանում եմ հայտնել, որ դրանք կատարվում են կապալառուների կողմից ներկայացված կատարողական ակտերի հիման վրա: Հիշյալ ժամանակահատվածում կապալառուների կողմից ներկայացված բոլոր կատարողական ակտերի դիմաց վճարումները ամբողջ ծավալով կատարվել են:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝ Ըստ էության առարկություն չի ներկայացվել: Տրվել է պարզաբանում:

8. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա, Բ)

Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագրի (Տրանշ Ա, Բ) համար ՀՀ պետական բյուջեից 2020 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,263,116.6հազ. դրամ: 2020 թվականի առաջին եռամսյակի համար ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 905,246.6 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 336,743.2 հազ. դրամ:

«ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվության համաձայն հունվար-մարտ ամիսներին նախատեսվել և իրականացնել է.

- Գյումրի քաղաքի հինգ փողոցների (միջինը 9.5մ լայնությամբ և 8.75 կմ. երկարությամբ) հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 3 փողոցների հիմնանորոգում, պակաս է կատարվել 2-ով:
- Գյումրի քաղաքի հարակից մայթերով (միջինում 4մ լայնությամբ) հինգ փողոցների հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 3 փողոցների հիմնանորոգում, պակաս է կատարվել 2-ով:

Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագրի (Տրանշ Ա, Բ**) համար պետական բյուջեով նախատեսված գումարներից կատարված վճրումները, ինչպես նաև ծրագրի ծախսերը հիմնավորող ոչ մի հիմնավորում նախարարության կողմից չի ներկայացվել:**

Հաշվեքննվող օբյեկտի արձագանքը

Նախարարության կողմից ներկայացվել է Գյումրու համայնքապետարանի բացատրությունները,

Ծրագրի վարկային և դրամաշնորհային բաղադրիչների համապատասխան միջոցառումների մասով 2020 թվականի պետական բյուջեով իրականացված ծախսերը հիմնավորող փաստաթղթերին, ապա դրանք յուրաքանչյուր վճարման հետ՝ ըստ կապալառուների, ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝ Առարկություն չի ներկայացվել, տրվել է պարզաբանում:

9. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն

«Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի» իրականացման համար 2020 թվականին ՀՀ պետական բյուջեից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 9,233,794.8 հազ. դրամ: 2020 թվականի առաջին եռամսյակի ճշտված պլանով հատկացնել է 1,927,280.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 332,140.8 հազ. դրամ, փաստացի ծախսը 510,885.8հազ. դրամ:

«**ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 26.12.2019թ.-ի թիվ 1919-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն** «Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ» ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված իրավունքները փոխանցվել է Երևանի քաղաքապետարանին:

ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի համաձայն, 2020 թվականի համար նախատեսված Բաբաջանյան-Աշտարակի խճուղի 9.4 կմ երկարությամբ և 24 մ միջին լայնությամբ նոր ճանապարհահատվածի կառուցման 20 տոկոս աշխատանքների և Արգավանդ-Շիրակ 2.7 կմ երկարությամբ ճանապարհահատվածի /ներառյալ Հրազդան գետի վրա կամուրջի/ կառուցման 50 տոկոս աշխատանքների կատարման ծավալի պարագայում, առաջին եռամսյակի համար աշխատանքներ չի նախատեսվել և չի կատարվել:

«Տիրենա Սքավի» ԲԸ օտարերկրյա իրավաբանական անձի Հայաստանյան մասնաճյուղի կողմից 21.02.2020 թվականին Բաբաջանյան փող. Աշտարակի մայրուղի հատվածում Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի կառուցման աշխատանքների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ է ներկայարել 510,876,868.6 հազ. դրամ արժեքով հարկային հաշիվը: Ընկերությանը 2020թ. առաջին եռամսյակում վճարվել է 332,140.8 հազ. դրամ /246,985.8 + 85,155.0/: Անհրաշեշտ է նշել, որ **ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածում կատարված աշխատանքներ չի նշվել:**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը և Երևանի քաղաքապետարանի միջև 30.01.2020թ. կնքված թիվ 1 պայմանագրում, չի ամրագրվել **ՀՀ կառավարության 26.12.2019թ.-ի թիվ 1919-Ն որոշման** 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանը, ըստ որի Երևանի քաղաքապետարանը պատվիրակված ծրագրի միջոցառումների գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները սահմանված կարգով պետք է ներկայացներ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

10. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ

«Դպրոցների սեյսմիկ պաշտպանության» ծրագրի իրականացման համար 2020 թվականին ՀՀ պետական բյուջեից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 10,682,757.0 հազ. դրամ, 2020 թվականի առաջին եռամսյակի ճշտված պլանով հատկացնել է 1,265,993.9 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 435,094.8 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների կատարողականների հիման վրա 2020թվականի առաջին եռամսյակում թվով 9 կապալառու ընկերությունների փոխանցվել է 383,121.6 հազ. դրամ: Ծրագրով կատարված բոլոր աշխատանքները իրականացվել են մինչև հաշվեքննվող ժամանակշրջանը կնքված պայմանագրերի համաձայն:

Կատարողի անվանումը	Աշխատանքի անվանումը	2020թ 1-ին եռամսյակի փաստացի վճարում
Ագաթ-777 ՍՊԸ	Գավառի թիվ 2 հիմնական դպրոց	73,946,116
Ղարաբաղցյան Շին ՍՊԸ	Երևանի թիվ 153 հիմնական դպրոց	64,492,112
Ախուրյանի Կոոպշին ՍՊԸ	Երևանի թիվ 135 հիմնական դպրոց	58,658,805
Բաղրամյանշին ԲԲԸ	Նոր Խարբերդի թիվ 2 միջնակարգ դպրոց	49,926,744
Վարարակն ՓԲԸ	Կապանի թիվ 7 հիմնական դպրոց	38,718,436
Բազալտ-էմ ՍՊԸ	Վ.Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոց	36,676,188
Եվրոպա ՍՊԸ և Բիդեք ՍՊԸ ՀԳ	Վայոց Ձորի մարզի ք. Եղեգնաձորի թ.1 դպրոց	30,603,937
Հիդրոէնշին ՍՊԸ	Մխիթար Հերացու անվան ավագ դպրոցի վերակառուցում և նոր մասնաշենքի կառուցում	21,369,442
Արփա-Սևան ԲԲԸ	Վանաձորի թիվ 7 հիմնական դպրոց	8,729,814
Ընդամենը		**383,121,594**

ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի համաձայն «Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով» հունվար-մարտ ամիսներին՝

• Նախագծանախահաշվային փաստաթղթերի, շենքերի հետազոտություն, տեխնիկական, հեղինակային հսկողություն, շինարարություն, գծով աշխատանքներ չեն նախատեսվել :

• Նոր սկսվող շինարարության նախագծանախահաշվային փաստաթղթերի, շենքերի հետազոտության, տեխնիկական, հեղինակային հսկողությոան աշխատանքներ չեն նախատեսվել:

• Սեյսմիկ անվտանգության չափանիշներին համապատասխան բարձրացված սեյսմակայունությամբ կամ վերակառուցված կամ նոր կառուցված դպրոցների գծով աշխատանքներ չեն նախատեսվել:

• Ծրագրի արդյունքներով անվտանգ պայմաններում սովորող աշակերտների թիվ չեն նախատեսել:

Սեյսմակայունության չափանիշներին համապատասխանող դպրոցական շենքերում սովորող աշակերտների թիվը նախատեսվել է ապահովել 14,1 տոկոս, փաստացի ապահովել է 4,85 տոկոս:

Հաշվեքննվող օբյեկտի արձագանքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի «ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի» շրջանակներում

հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության արձանագրության մեջ ներառված ՀՏՋՀ-ի կողմից Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրին վերաբերվող կետերի մասով ներկայացվում են հետևյալ դիտարկումները՝

1. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված 12001 միջոցառման շրջանակում վճարումներ իրականացնելու համար նախատեսված են ոչ թե երեք, ինչպես նշված է արձանագրության մեջ, այլ երկու հաշիվ՝ 900000905910 (դոլարային) և 900000905928 (դրամային): Հաշվեքննվող ժամանակաշրջանում նշված երկու հաշիվներից էլ իրականացվել են վճարումներ: 900001010868 դրամային հաշիվը պատկանում է ՀՀ ՏԿԵ նախարարությանը և օգտագործվում է համաֆինանսավորման գումարները ՀՏՋՀ-ին փոխանցելու համար:

2. «Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով փաստացի փոխանցվել է 387,552.8 հազար դրամ թվով 9 կապալառու կազմակերպություններին և հաշվեքննության արձանագրությունում բերված աղյուսակն ըստ մեր հաշվապահական տվյալների պետք է ունենա հետևյալ տեսքը (վճարման հանձնարարականները կցվում են).

Աղյուսակ 3

Կատարողի անվանումը	**Աշխատանքի անվանումը**	**2020թ. 1-ին եռամսյակի փաստացի վճարում**
Ագաթ-777 ՍՊԸ	Գավառի թիվ 2 հիմնական դպրոց	74,611,577.00
Ղարաբաղցյան Շին ՍՊԸ	ք.Երեւանի թիվ 153 հիմնական դպրոց	64,757,521.00
Ախուրյանի Կոոպշին ՍՊԸ	ք.Երեւանի թիվ 135 հիմնական դպրոց	60,095,242.00
Բաղրամյանշին ԲԲԸ	Նոր Խարբերդի թիվ 2 միջնակարգ դպրոց	51,036,164.00
Վարարակն ՓԲԸ	Կապանի թիվ 7 հիմնական դպրոց	38,865,274.00
Բազալտ-Էմ ՍՊԸ	Վ.Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոց	36,846,289.00
Եվրոպա ՍՊԸ և Բիդեք ՍՊԸ ՀԳ	Վայոց Ձորի մարզի ք. Եղեգնաձորի թ.1 դպրոց	30,708,779.00
Հիդրոէնշին ՍՊԸ	Մխիթար Հերացու անվան ավագ դպրոցի վերակառուցում և նոր մասնաշենքի կառուցում	21,662,779.00
Արփա-Սևան ԲԲԸ	Վանաձոր թիվ 7 հիմնական դպրոց	8,969,129.00
Ընդամենը		387,552,754.00

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Նախարարության կողմից ներկայացրած առարկությունը, ըստ էության, պարզաբանում է: Ինչ վերաբերվում է “Շենքերի և շինությունների շինարարություն’’ հոդվածով կատարողականների հիման վրա 9 կապալառու ընկերություններն փոխանցված գումարին, ապա մենք տվյալները ձևավորվել են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային (LSFINANCE) համակարգից:

Հաշվեքննության ընթացքում ձեռք ենք բերել բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը՝

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ի թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում՝ ըստ նշանակության դասակարգված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների դասակարգումը համապատասխանեցնել «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝

«ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և անվտանգ երթևեկության ծառայություններ» մատուցելու համար կապալառու կազմակերպությունների հետ համաձայնագրերը կնքել տարվա սկզբից, որպեսզի աշխատանքները իրականացվեն պահպանման մակարդակների չափանիշներին համապատասխան:

Ծանոթություն՝

«Հաշվեքննիչ պալատի մասին»՝ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հաշվեքննության օբյեկտի ղեկավարը, ընթացիկ եզրակացությունն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվեքննիչ պալատին տրամադրում է ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն: